



## ՑՈՒՑԱԿ

### ՄԱՅՐ ԱԹՈՌՈ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱԾՎԱԾ ԶԵՐԱԳՐԵՐԻ\*

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 10ր.—(Ամբողջ էջի ծավալով նկարի տակ գրված է երկաթագրով)

Ծառա Խուպիեար:

Թ. 103ր.—Եղբայր զայս ամեն արուեստն որ գործես քանի կարև պարկեցն տեղիք գործէ, զի խիստ վատաշի ահութի աչք չի վերցներ, ահա ասացի ձեզ:

#### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է) Բիրիքուն ծաղիկ ասին:

Խիլիշ աղի լինին:

Խոտավիրու:

Խալի Հալ:

Նոյնքերի ԺԼ-ին ժ Ղոշ Ալտարին տվի:

Թ. 1ր.—Երանեալ է:

Այս է Սիմօնին գրչ.:

Թ. 9ր.—Արգեկը (գրված բազմաթիվ անգամ, որպես գրչափորձ):

Թ. 10ա.—(Գլխացավի դեղատումն է տրված արս տևող):

Թ. 11ա.—Կա մի փոքրիկ կնիք,  $1,8 \times 1,1$  սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Սարգիս Վոլոպ.:

\* Շարունակված «Եշմիածին» ամսագրի 1964 թվականի № Ն Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № Ն Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № Ն Ն Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № Ն Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № Ն Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № Ն Ա Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № Ն Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № Ն Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № Ն Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977 թվականի № Գ-ից:

Թ. 20ա.—Երևան ցաւ ու խիստ պիտի:

Թ. 23ր.—(Կա մի փոքրիկ կնիք,  $0,9 \times 0,8$  սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Խոյիար:

Թ. 24ր.—(Նոյզ կնիքը կրկնվում է այսուն):

Թ. 58ր.—(Կա մի փոքրիկ կնիք,  $1 \times 0,8$  սմ. չափերով, որի վրա գրված է կապուրով)

Կարապիս

Թ. 59ա.—(Կա մի փոքրիկ կնիք,  $1,8 \times 1,1$  սմ. չափերով, որի վրա գրված է)

Քի. ծո. Խորգիս Վոլոպ.:

Թ. 68ր.—Զուգ Բիտի:

Թ. 92ա.—Զխաղողին որթուն տերևն և զոտն ծեն:

Թ. 92բ.—...կոնն ծնձէ և մաղէ և թեր խառ... լիրար, որ միաւորի դիրամ ... օգուէլ:

Թ. 94ա.—Թուղանիսան ասին:

Թ. 95ր.—... րոյք արա և շիպ և սապոն և սակա զաֆրան աղա մանը զպատրոյքն թաց և դիր:

Թ. 108ր... զամենն պարապար և Բ մեղը տուր ծերոցն, Գ տրմ. կորիճ մարդոց Բ օգուէ փորձած է:

Թ. 138ա.—Հին հազի և թոքի և պալղամի:

Թ. 156ր.—Այս ԲԷ(քի) մարանը 101 թուխա այ:

Թ. 157ա.—Սր. երկուրդուն. հօր և ուրդոյ և Սր. Բող. մեղա լերկինս և արաշ, աշի. որէ. Ծ Տէր մեղա այսէ:

10 թուտէ: Ֆիլիպ:

Թ. 157բ.—(Տրված է մի դեղատում:)

Այս է տապան դիր հանգատի, որ է Մարի:

Թ. 158ա.—(Տրված է երկու դեղատում:)

Թ. 158բ.—(Տրված է մի դեղատում:)

(Կազմի կոնակի թյոժին գրված է)

Կամացկուրեամբ Աստուածային,

զայն որ խորին միշտ առ բարին,

Անապականել մի:

Պաղատանօք Աստուածածին,

անապական և միշտ Կուսին:

Գիծ, որ է գիթապ Ռեքիմարանին, գիթ.

№ 412  
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

**Թերթերը՝ 180:**— **Պրակեները՝ 18,** յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 3, Բ՝ 4, Գ՝ 9, Դ՝ 1, Ե՝ ԺԲ, ԺԲ՝ 11, Խ՝ 10 թերթից են: Սրանցից բացի սկզբնական ձեռագրից պահպանում են ամբողջ 8-րդ և 9-րդ պրակեները:— **Մեծությունը՝**  $14,5 \times 10,2 \times 4,3$  ամ:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուլյ:— **Կազմը՝** կաշեալսա տախտակ, որի երկու բռնիչներն ընկել են:— **Պահպանակեներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, երկու պրակ (Ը և Թ) ամբողջությամբ պահպանում են, իսկ բազմաթիվ պրակներ են թերթ են, շատ թերթեր բավկելով ժամանակի ընթացքում:— **Գրությունը՝** միապատճ:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** ճնշումը:— **Գիրը՝** բարդագիր:— **Զարդարությունն՝** ձեռագիրն ունի միջակ գեղեցկությամբ վեց հաստ գլխացարդիկ (թթ. 23թ, 49թ, 81ա, 103թ, 138ա և 170թ), բազմաթիվ թռչնագրեր, զարդարդիր և լուսանցարդիր:— **Գիրը՝** Մարտիրոս բանան:— **Պատճառատեսք՝** անհայտ:— **Մալդուղը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1595 թ:— **Վայրը՝** Սևաստիա:— **Մանրականությունն՝** ձեռագիրն ստացվել է Կամիրելից եզրակացնայոց թեմի առաջնորդական տեղապահ Զալեհ Եղիշիկուսու Զինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՄԱՆ

**Թ. 190ա.**—**Փառք ամենատարր Երրորդութեանն և մի աստուածութեանն Հայր և Որդոյ և Հոգոյն պրոբ(1):** Որ ես կարողութիւն տկար անձին իմ՝ Մարտիրոս գրչի հասանել յաւարդ սադմասարանի և աղարթմասուցիս: Ի թիմ Ռինդ (1595 թ. Ն. Մ.), ի բաղարս Սերաստիոյ, ընդ հովանես Սուրբ Աստուածածին և Սուրբ Սարգսին զարավարին:

Արդ աղածեմ զամենեսեան որք հանդիպիք ամս կարդալով կամ արինակելով լիշեցէք յալաթս ձեր զիւ զբա(զ) մամել երեցս, և զծնաւըս իմ հանդիր ամենայն կենդանեաւը և հնչեցելով, և որ լիշէ լիշալ լինի ի Քիհսոսու, որ է արինեալ յափառան ամէն: Ի յաս ամս հանատալին զՏատուրն զորդին Շատա(թ. 190թ) ըլին յունիսի Բ յառ բազում չարչարանաց ի տախտակն խաչանան թեւնուցին, զերկու ուսն դան(ա)կով ծակեցին ու ֆիքիլ վասնեցին, իսկ նայ սաղմուտք և զՔիհսոս կենդանին արթներ, յևոտ(1) տարան ի գետեկերն ի ծառն ի վար կախեցին, նայ չուանն կորեցա շնորհօքն Քիհսոսի որ կենդանի անօի մէջ դրին և նայ զոյտն յարեւել ունելով գտնութիւն մատուցաներ Քիհսոսի և սորք հաւատոյս մերյ Լուսատոշին. և տեսակ կատաղի ազգն տաճկաց զբաշութիւն և զբամ(թ) երութիւն նորին. բարի բարկուծեցին և սրով զիսատեցին, և զայն զիշեր անթաղ թողին և զնացին, բայց ի յերկնից լոյս ծագեաց ի մէջ զիշերին. ի վերաց նոր հանատանին երանելի մանկան Տատուրին և յևոտ(1) զմարմին խողին(ո)ղեալ և կըտ-

բառեալ ժողովացին և տարեալ ի Սուրբ Քառասուն ի հանգիստ եղին: Ի յարս ամս բազարութեան ապլուան Մամմատն, որդի սովորան Մուրատին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձևագրի կազմի կոմակում գրված է)

Թի 6:

Թ. 1p.—Թի 6:

Թ. 124ա.—Ալէ, սր, իւ, խծ, ձկ, նո (գրչափորձ):

Թ. 135թ.—Անել, ամենայնի:

Թ. 136ա.—Զոր արկեր յերկիր:

Առաջի քր ամեն այս ժամ զիս և:

Թ. 137.—Անձին իմոյ:

Թ. 190թ.—Նազարեթ Շատուրիան (սա այս ամսն է, որ ձեռագիրը նոյն մատուցով համարակալվ է ամբողջությամբ սկզբից մինչև վերջը, նշելով 1—380 էջերը):

№ 413  
ԽԱԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Թերթերը՝ 154:**— **Պրակեները՝** 8, յուրաքանչյուրը 20-ական թերթից, բացի Ա՝ 16 և Ը՝ 18 թերթից են:— **Մեծությունը՝**  $20,5 \times 13,8 \times 1,4$  ամ:— **Նյութը՝** դեղնած բարակ թուլյ:— **Կազմը՝** բարակ առվարարություն:— **Պահպանակեները՝** սկզբում և վերջում կա մեկական հասարակ բարակ թուլյ, կարմիր և կապույտ գծավոր:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապատճ:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1թ, 14թ—15թ, 154թ:— **Տողերը՝** 8:— **Գծումները՝** թուլյն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** բարդագիր և հավական նոր խավեր:— **Զարդարությունն՝** չունի:— **Գիրը՝** Սերովիք Սիրունյան, աշակերտ Գրիգոր Մեմերյանի:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** Կուտանիուպիսի:— **Մանրականությունն՝** ձեռագիրն ստացվել է Սուտամրից 1974 թ. ձեռամբ Բագրատ Անմերյանի:

ԲՈՎԱՆԴԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայկական նոր խազագրության սովոր ձեռագիրը գրված և նոտագրված է պղսանակ անվանի երաժշտագետ Գրիգոր Մեմերյանի աշակերտ և Գումարուի Սուրբ Հարություն կելիուցու երաժշտագետ Սերովիք Սիրունյանի կողմից: Գրի գլաւալոր վերացրեար տրվում են ստորև.

Թ. 2ա.—Հարց յարութեան (թի):

Թ. 4թ.—Մեծացուցէ: (թի):

Ողորման (թի):

Թ. 5ա.—Տէր յերկնից (թի):

Թ. 9ա.—Հարց կրնան խաչի (դէ):

Թ. 18ա.—Հարց Բ.րդ Մաղկազարի (դի):

Թ. 24թ.—Շարական Հոգեկազմական (թի):

Թ. 26ա.—Հարց տօն կաթողիկէ և կելիուցու (դէ):

Թ. 30ա.—Շարական բափորի (դի):

Թ. 38ա.—Կանոն վարդապատի (աճ):

Թ. 40ա.—Շարական (ստեղի) դի:

- Թ. 44թ.—Մեծացուցէ: (գկ):  
 Թ. 45ա.—Ողորմնաւ (գկ):  
 Տեր լերկնից (գկ):  
 Թ. 46ա.—Տաղ Աստուածածնայ (պէտքի: աղըր սէմայի: Պապա Հ. Լիմոնճեան):  
 Թ. 48ա.—Երգ Աստուածածնայ:  
 Թ. 50ա.—Կանոն վերացման Ա. Խաչի (աձ):  
 Թ. 52թ.—Հարց (գկ):  
 Թ. 56թ.—Շարական խաչի (գկ):  
 Թ. 63ա.—Օրհնութիւն Վարագայ Ս. Խաչի (ալ):  
 Թ. 78ա.—Հարց (բժ) Գիտ Խաչի:  
 Թ. 119թ.—Կանոն Է-րդ աւոր Ծննդեան (բժ):  
 Թ. 142ա.—Հարց Բուն Բարեկենդանի:  
 Թ. 154ա.—Ցանկ լատուկ շարականաց (պատեղ տրված է միայն 15 շարականների մի ցուցակ):

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Զենագրի սկզբում գտնվող պահպանակի վրա գրված)

Սղանի, 85, դպրոց:

- Թ. 1ա.—Գրեց Սերովիք Սիրունեան  
 (Աշակերտ Գրիգոր Մեհրերեանի)  
 վաստակաւոր երաժշտապէտ  
 Ս. Յարութիւն Կեղեցւոյ  
 ի Գումգարու, 1945:

### № 414 ԱՂՋՄԱԳԻՐՁ (Եթովպերեն)

- Թերթերը՝ 66:— Պրակմերը՝ 9, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Ա' 4 և Թ' 6 թերթից են:— Մեծությունը՝ 18,4×9,6×8 սմ.:— Նյութը՝ դեղնած հաստ մագաղաթ:— Կազմը՝ կաշեապատ տախտակ, որ ծածկված է հասարակ կտորով: Ներքևում կա 80 սմ. բարակ և երկար մի կտոր, ծայրը ողով, մի տեղից կախված նապատակով:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ թթ. 5ա—52ա և 59ա—60թ երկայն, իսկ 58ա—59ա և 61ա—63թ միասպատ:— Գատարկ թողերը՝ 1ա—4թ, 52թ, 64ա—66թ:— Տողերը՝ 18, միայն մի քանի էջ՝ 17 տող:— Գծումները՝ ճշշումով:— Գիրը՝ ամրարենք:— Զարդագրություն՝ չունի:— Գրիշը՝ անհայտ:— Պատվիրատում՝ անհայտ:— Ժամանակը՝ 17—18 դարեր:— Վայրը՝ շատ հավանաբար Եթովպիա:— Մանություն՝ Վեհափառ Հայրապետոր սովոր ձեռագիրը հանձնել է Զենագրատում 1974 թ. նոյեմբերի 16-ին:

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Թ. 2թ.—Կա երկու բառ փոքրատառով գրված:  
 Թ. 3թ.—Կա մի բառ փոքրատառով գրված:  
 Թ. 4թ.—Կա յոթ տող մեծատառով գրված:  
 (Այս բոլորը եթովպերեն է:)

### № 415 ԽԱԶԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Թերթերը՝ 464+2 (թթ. 5ա և 9ա) = 466:— Պրակմերը՝ 26, բոլորովին անհամաշտի, Ա' 10, Է' 12, Ը և ԻԴ' 14, Դ և ԻՁ' 15, Ծ, ԾԳ, ԾԶ, ԾԷ, ԾԹ և ԽԱ' 16, Ե և ԽԵ' 17, Թ, ԾԱ, ԾԵ, ԾԸ, Ի, ԽԲ և ԽԳ' 18, ԾԴ' 19, Բ' 20, Ծ' 24, ԾԲ' 33 և Գ' 34 թերթից են:— Մեծությունը՝ 20,1×16,8×4,7 սմ.:— Նյութը՝ դպրոցական հասարակ թուղթ:— Կազմը՝ լաթակաց տախտակ:— Պահպանակները՝ սկզբու և վերջում մեկական կարմիր հաստ թուղթ:— Վիճակը՝ լավ:— Գրություն՝ միապուն:— Գատարկ թողերը՝ 39թ—62թ, 140թ—162թ, 172ա—193ա, 196թ, 237թ, 251ա—264թ, 286թ—298ա, 311թ—315թ, 325թ—382թ, 388թ, 342ա, 351թ—366ա, 376ա—384թ, 392ա—438թ, 446թ—464թ:— Տողերը՝ 9, սակայն երեսն 6—8:— Գծումները՝ թուղթը ինքնին գծավոր է:— Գիրը՝ շղագիր և հավական նոր խազեր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիշը՝ Հակոբ քահանա Մխման (1889—1954 թթ.):— Ժամանակը՝ 1980 թ.:— Վայրը՝ Մարսել (Ֆրանսիա):— Մանություն՝ Վեհափառ Հայրապետոր սովոր ձեռագիրը հանձնել է Զենագրատում 1974 թ. նոյեմբերի 16-ին:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Միրում է ձևագրի գլխավոր վերմագրերը միայն:—

- Թ. 1ա.—Մանկունք Դկ. Ստեղի Բ-րդ աւոր Ս. Խաչի:

- Թ. 4ա.—Մանկունք Բկ. Ստեղի Բ-րդ աւոր Վարովակի:

- Թ. 7թ.—Թագաւոր լախտեան հրեշտակապետաց:

- Թ. 11ա.—Կանոն 72 աշակերտացն Քրիստոսի, հարց (Դկ.):

- Թ. 29ա.—Հարց Ակ. Մեծ պահոց Բ-րդ շաբաթուն:

- Թ. 36ա.—Հարց Աձ. Դարձուածք Ս. Ծննդեան ութօրէիցի:

- Թ. 38ա.—Ծար. Դձ. (ողտ.) ծննդ. Յովհ. ու Ակրտչի (ի պէտս Գշ. աւոր մեծ պահոց միջինքի):

- Թ. 68ա.—Կանոն Գ-րդ կիւրակէի մեծ պահոց, օրի. Գկ.:

- Թ. 101ա.—Սւագ Բինաշաբթի շարականք ապաշխարողաց, ողորմեան Դկ.:

- Թ. 106թ.—Կանոն Ծննդեան և Աստուածայայտնութեան ճրագալոյցին, օրի. բժ.:

- Թ. 121թ.—Մանկունք և համբարձի բժ. Արբոց Սուրբատեանց:

- Թ. 122թ.—Մանկունք և համբարձի Դկ. Արբոց Վարդանանց:

- Թ. 124թ.—Մանկունք Դկ. Նիկողայոսի Զմիոնցիոյ հայրապետին:

- Թ. 126թ.—Մանկունք Դկ. Արբոյն Բարս(Ա) դի Բայրապետին:

- Թ. 127թ.—Մանկունք Դկ. Յովհաննու Ուկերերանին:

Թ. 129ա.—Մանկունք Դկ. Մանկանցն Բերդեմիտի:

Թ. 131ա.—Կանոն Ս. Գրիգոր Լուսառշչին, լիցապունը ելանից ի Վիրապէն, օրի. Բա.:

Թ. 163ա.—Տէր յերկնից Դճ. (Պէտէկոստի գործառություն):

Թ. 168ր.—Տաղ Աւետևաց:

Թ. 169ա.—Տաղ Խաչի:

Թ. 169ր.—Տաղ Մարտիրոսաց:

Թ. 170ա.—Տաղ Ս. Կոսին (Աղբ Սէմայի):

Թ. 197ա.—Մեղենի Ցարութեան (Ափաման):

Թ. 198ր.—Մեղենի Ցարութեան և Ծաղկազարդի (Եվհճ):

Թ. 216ր.—Տաղ Մննդեան և Ցարութեան:

Թ. 228ր.—Մեղենի խնձորելութեան (Ասպա):

Թ. 228ր.—Մեղենի Համբարձման, Հոգեգալատեան և Վարդավանի:

Թ. 228ր.—Մատիօրի շարական Ս. Զատկի և Ցինանց կիրակիցի:

Թ. 238ա.—Շարական Գկ. ի պէտս Բանիխատը առուրց:

Թ. 301ր.—Սրբացորդին Մննդեան, Աւետևաց, Վարդավանի և Աստուածածնաց:

Թ. 310ր.—Եռաձայն երգ, զինի Խողաբերից Անկտարանի:

Թ. 434ա.—Ցանկ գրուածոց:

### ՀԻՉԱՏԱԿԱՐՄԱՆ

(Կազմի վրայի սպիտակ պիտակի վրա գրված է՝  
Տեսր եկեղեցական երգեցորդութեանց  
վերաբերի Ցակոր քնի. Մշտեանի:

### ՀԻՉԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

(Կազմի ներսի կողմը կա քանանա գրչի փոքրիկ լուսանկարը,  $5,7 \times 3,7$  սմ. չափերով, որի կողը սպիտակ թոքի վրա մերձագրված է հնալսալը.)

Համառու կենսագրականը Տէր Ցակոր քնի. Միանեանի

Բնիկ Աստարազի, ծնած է 1889ին, անունն է Գրիգոր: Իր ծննդավայրին Արամեան Վարժարանը աւարտելէն յևսոյ 1906ին կը դրկուի Արմաշի Դրաբեկանը. ուր աշխարհականց դասթեացը լուց ներկա վերջ կը վերադասնաց Աստարազը: Այս կը ծառացէ: իր ազգին որպէս ուսուցիչ և երաժշտավան:

1919ին Պոլսոյ Պէշիկեաց թաղին եկեղեցին դարավանդութիւնը կը վարէ:

1929ին Մարտէլի մէջ Ս. Թարգմանչաց Մայր Ենթեցոյ դարավան կը պաշտօնավարէ: ապա կը ձևանադրուի քանանայ:

1932ին կը մեկնի Պոլսոր, Միացլաւ նահանգներ: կը ծառացէ: բան և երկու տարիներ Ս. Փրկիչ եկեղեցոյ մէջ: Նաև տարի մըն ալ անոր նորակարոց եկեղեցոյ մէջ կը պաշտօնավարէ: Ամ շատ սիրուած և յարգուած նովի մըն էր իր Բոտին:

Ստոցած էր լանջախաչ կրկու և Աւագ քանա-

նայութեան աստիճանը: Տէր Հարը ամիսնց, անձնուեր և նովիրուած հոգեկրուական մըն էր: Խնըր արդէն շատ քաջ շարականագէտ մըն էր շատ լաւատելակ մասնագետներու դասումով:

1905ին Աստարազի մէջ Բրատարական է Երգեցողութիւնը Սուրբ Պատարազի անոն գրոյկ մը, նաև երգարան մը: 1930ին Մարտէլի մէջ դասուրած և Բրատարական է Եկեղեցական երգեցողութիւնը անոն ընթացակ գիրը: Հայկական և Երրուազական ձայնագրութեանց մօտեն տեղեակ ըլլալն: Պուտրի մէջ տարիներու որբանաց աշխատանքով մէր եկեղեցական բոլոր տաղերը, մատոյինը, շարականները երգարական ձայնագրերով և տատերով 1944ին բաջողած է գրի անոն 265 մածանաւալ էշերէ բաղկացեալ շարականագիրը մը, որը արուօնուած է Հայաստանաց եկեղեցիներուն մէջ երգի համաշափ և ներդաշնակ երգեցողութեան սատուր համելիսանազով, և մատչելի ըլլալով անզիւհու նայ նոր սերմենինի:

1946ին ալ 130 էշերէ բաղկացեալ մածանի ձայնագրեալ երգարան մը, որուն մէջ ամփոփուած և կօրանասուն երկու հատընթիր երգեր Խնչակն նաև վարուուն և չորս արելելան սիրերգենը հայերէնի բարգմանած է: Այս և անզիւհու նոր սերմենին օգտակար ըլլալու համար:

Արժանաշնորհ Տէր Ցակոր Աւագ Քահանայ Մըլիւան վախճանած է ապրիլ 26, 1954, Պուտր բաղարին մէջ. Միացլաւ Նահանգներ:

Վերոյիշեալ հայկի կենսագրականը բաղուած (է): Տէր Հօր ինքնակենսագրութեաննէն:

Երեցկին Տիգրանունի Միհնեան:

(Պահանաւակի կրնակում)

Գրելիքներս ևն՝

Սապահի ամեն և ընդ նուրոյ բում.

Համեմատ թիշ ...

Վականաց Գողթնացույն զարմանալի է ինձ:

Թ. 2ր.—Երկնաւոր նոյ...ը տէ՛ս Գարբիէլի և Միքայէլի կանոննին մէջ (էջ 21):

Թ. 121ա.—Շաշու Աճ. (Դարձուածք) Անսկիզբ Ասուուած: Տիւ էջ 334:

Թ. 200ր.—Զաէնի գրած ևմ (նոյնը էջ 202ա և 207ա):

### № 416

### ՀՄԱՅԻԼ,

**Թերթերը՝ 1:**— **Մեծությունը՝**  $130,2 \times 10,8$  սմ:—  
**Նյութը՝** դեղնած բարակ թուրք:— **Կազմ՝** չոնի:—  
**Պահպանակներ՝** չոնի:— **Վիճակը՝** բավարար, սական տեղ-տեղ ներկի ազդեցութեան տակ թոքի որոշ մասերը մաշվել և ծակվել են:— **Գրությունը՝** միաւուն:— **Տողերը՝** 88:— **Գծումները՝** առանց ճնշումի:—  
**Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրությունը՝** հմայիլի երկու լուսանցքները երեք գույնի երիգ է երեկիսած: Կարմիր և դեղին երիգները բարակ են, իսկ կապուստ ավելի նաև: Ձեռագիրն ունի բալգականի գեղեցիկ երեք նկար, որոնք ներկայացնում են Հիսուսը, Աստվածածինն և Սուրբ Գևորգը: Կա նաև երեք

բոշնագիր և չորս ծաղկի: Այս բոլորն եւ չքաներկ են: — **Գրիշը՝ ներընծա Ավետ Տէր Ղազար:** — **Պատվիրատում՝ Գրիգոր Սրբարյան:** — **Մաղկողը՝ անհայտ:** — **Ժամանակը՝ 1880 թ.:** — **Վայրը՝ Սրբ Աստվածանս եկեղեցի** (սակայն տեղավայրը անհայտ է): — **Մանորթուրում՝ Վեհափառ Հայրապետը սույն հմայիլ հանձնել է Զետագրատուն 1974 թ. նոյեմբերի 18-ին:**

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեջբերում Ղուկասու Ամեսուրանից և մի քանի աղոթքներ ու մաշտամբներ:

### ՀԻԾԱՏԱՎԱՐՄԱՆԵՐ

Եւ եղիցի բժշկութիւն ծառայիս Պրճ. Գրիգորին, իր Խաթունին և որդոցն:

Աստուծ բարեխօս լեր ի փորձան(ա)ց զմեզ փրկեալ և մանաւանդ զծառայս Պրճ. Գրիգորին, իր Խաթունին և որդոցն:

... պամիա տէր զծառայս Պրճ. Գրիգորին, իր Խաթունին և որդոցն:

... փրկեալ և ազատեա զծառայս և Պրճ. Գրիգորին, իր Խաթունին և որդոցն:

Գրեցա Հմայիլս ի Դրան Սրբոյ Աստուծածնայ նկեղեցւոյն ձեռամբ նորընծա Ավետ Տէր Ղազարին վասն պահպանութեան:

Ֆամիլիա Տեառն 1880 տասն 25:

(Հմայիլի կոնակի վերևի մասում գրված է:) Ազնի Պրճ. Գրիգոր Սրբարեան

### № 417 ԿՈՆԴԱԿ

**Թերերը՝ 1:— Մեծորթունը՝ 71,5×51,6 ամ.՝**  
Նյութը՝ դիմացկուն հաստ թուրդ: — **Կազմ՝ չունի:** — **Պահպանակներ՝ չունի:** — **Վիճակը՝ լավ:** — **Գրութունը՝ երկայն:** — **Տողերը՝ 33:— Գծումները՝ մատիտով:** — **Գիրը՝ շղագիր:** — **Զարդարություն՝ կոնդակի վերևի կենտրոնական մասում նկարված է երկինքը, որտեղ ամպերի մեջ գտնվում են երկու աղջկեմեր, իրեշտակների թնձորվ, մեկ ձեռքով բրնձած են մեկական կանաչ զույգ, իսկ մյուս ձեռքով միասին պահում են մի մեծ ծաղկեապակ, կարմիր ծաղկեմերով, կանաչ տերևներով և կարմիր երկայն երկով: Այս ծաղկեապակի մեջ կա Գերոք Ե-ի կաթողիկոսական կարմիր մեծ կծիքը, 5,6 ամ. տրամագծով, որի շուրջ բոլորը երկու տողով գրված է մետուկալը. «Գերոք կաթողիկոս ամ(ենայն) հայոց և Մայորգյուն պտղը. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածին: Էջմիածին ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա— ռթկն» (1912 թ.—Ն. Ս.): **Կծիքի կենտրոնում նկարված է մի կաթողիկոս, ձախին՝ Էջմիածին Մայր Տաճարը, աջին՝ Արարատ լեռը և գագաթին նոյան տապանը, իսկ վերևում՝ երկնքում՝ երկու իրեշտակներ: Կոնդակի վերևի երեք տողը տպված****

է երկաթագրով, որը կարդացվում է «Գերոք ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ, Եպիսկոպոսական և կաթողիկոս Ամենապահ հայոց, Ծայրագոյն պատրիարք համագալական հայամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցու Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի»: Առաջին տողը ուկենքով է տպված, իսկ 2-րդ և 3-րդ տողերը՝ կարմիր թանարով: Սկզբի «Գ» տառը գեղեցիկ մի մեծ ( $8,5 \times 7,5$  ամ. չափերով) զարդագիր է, որի մետավորման մի նրեցտակ է կանգնած: Սա գտնվում է կոնդակի ձախակողման մասում, իսկ աշակողմում Շիարված է Էջմիածնի Մայր տաճարը, մանկահամակ երկու թրետակմբ, որոնց մեջ ձեռքին կա նկուցներական զավական, իսկ մյուս ձեռքով բռնած նի մապակնեն, որի վրա գրված է «կաթողիկոս» բաւրություն: — **Գրիշը՝ անհայտ:** — **Պատվիրատում՝ Գևորգ Ե. Սուրենացանց, կաթողիկոս ամենայն հայոց (1911—1930 թթ.):— Մաղկողը՝ անհայտ:** Սույն կոնդակը մի գեղեցիկ նմուշ է, որ տպված է Տփիսիի Հ. Շահրաբաշանցի Գեղարվեսու վիմագրատան մեջ: — **Ժամանակը՝ 1922 թ.:** — **Վայրը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վաճքը:** — **Մանորթուրում՝ Վեհափառ Հայրապետը սույն կոնդակը հանձնել է Զետագրատուն 1974 թ. մայիսի 18-ին:**

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգեզգոն Միարանից Ս. Ուխտին նոշակաւոր Մենաստանին Սևանայ, բարեկրօն քահանայից, պատուարժան Ծխական նոգարարձութեանց, քրտնաշան երկրագործաց և շինականց շրջակա գիտորդից Սևանայ, հարազարդ որդուց Մայր Աթոռոյն նոյեմբեր զՀայրապետական օրինութիւն և զՓըրկշամանդ մէր առ ի կալ և մնավ Ձեզ՝ անարատ ի վարու, անբիծ ի հաւատու, անփոր ի կեանս լցեալ բարեկացաշութեամբ և պտղովք արդարութեան ըստ նամայից կամացն Աստուծոյ, Ամէն:

Եւ ընդ Հայրական ողունիսին և Հայրապետական օրինութեան յարտ առնեմբ սիրեցելող առ ի Մէնջ որդուց, զի հասանայն խմերանաց Միարանութեան Մենաստանին Սևանայ և տեսանել զնորդ ընտրեալ և հաստատեալ ի Մէնջ զվանահայր Մենաստանիդ զՏ. Գիտ Ծ. Վարդապետ յԱռաքելական աստիճան Եփիկոպոտութեան վասն օգտաված ծառայութեան իրոյ և ի խրախուս առ յապայն գործունեութիւն, Սեր, ի 16 տոկու ամսոյ, ի տօնի Գիտի Ս. Նշանարաց Ս. Հօրդ Սերոյ Գրիգորի Լուսաւորչի, շնորհեցար նմա զբարձր կոչումն Եփիկոպոտութեան, ձեռն եղեալ ի վերայ նորա և օծեալ Ս. Միոնինի ի Քրիստոսի Մայր Տաճարի: Ահաւասիկ առաքեցար զնա առ Ձեզ ի միհիթարել զՁեզ և զքրաբեացն Ուխտի և զքրտնաշան երկրագործս շրջակայ գիտորդից ի շարունակել զպաշտօն իր, ի պայծառացուցանել զկեղեցից Սևանուծոյ, հաւատացեալ տեսչուեան իրում, ի կրթել և վարժել զամնենեանան. յԱստուածային օրէնս և Սևանարանական պատուերս:

(Ծարունակելի)